ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 48-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԱՌԱՆԸ, ՋՐԱՎԱԶԱՆԸ, ԾԱԾԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 06.02.2020թ. N 32-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 12022020-06-0053 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Մարտուն Արսենի Սարիբեկյանն ընդունել է մառանը, ջրավազանը, ծածկը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/15-38/1 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 06.02.2020թ. N 32-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 21.61 քմ արտաքին մակերեսով մառանը, 8.23 քմ արտաքին մակերեսով ջրավազանը, 3.9 քմ մակերեսով ծածկը՝ ընդհանուր 58033 (հիսունութ հազար երեսուներեք) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.02144 հա մակերեսով հողամասը՝ 113203 (հարյուր տասներեք հազար երկու հարյուր երեք) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Մարտուն Արսենի Սարիբեկյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում մառանի, ջրավազանի, ծածկի և սպասարկման համար զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. փետրվարի 20
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 47-Ա

ԴԵԲԵԴ ԹԱՂԱՄԱՍԻ N 18/15 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ, ՆԿՈՒՂԸ, ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿՆ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 25-րդ, 26-րդ, 31-րդ, 32-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված շինությունները՝ բնակարանը, նկուղը, աստիճանահարթակն ու կատարված ձևափոխությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Հարություն Վարոսյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 1156140 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված շինությունների հատակագծերը, «ԹԻՎ 1 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***

1. Հարություն Վարոսյանին, Սիրվարդ Վարոսյանին, Քրիստինե Վարոսյանին, Լուսինե Վարոսյանին, Հեղինե Վարոսյանին, Համլետ Վարոսյանին համասեփականության իրավունքով պատկանող Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի N 18/15 հասցեում գտնվող բնակարանին կից՝ 2010թ. ինքնակամ կառուցված 42.18 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (36.8 ներքին մակերեսով) շինությունները ճանաչել օրինական:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 26-րդ կետի համաձայն նշված բնակարանում կատարված 8 հատ դռների և պատուհանների, 8 հատ միջնորմների ձևափոխությունները ճանաչել օրինական:

3. Օրինականացված 42.18 քմ արտաքին մակերեսով շինությունների զբաղեցրած հողամասի նկատմամբ կիրառվում է շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով փոխանցելու վերաբերյալ նորմերը:
4. Օրինականացված նկուղի, բնակարանի, աստիճանահարթակի և ձևափոխված դռների, պատուհանների, միջնորմների համար սահմանված վճարներն ընդհանուր՝ 31519 (երեսունմեկ հազար հինգ հարյուր տասնինը) դրամ գումարի չափով, սահմանված ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. փետրվարի 20
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 46-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Ռուբեն Արայի Թովմասյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 2284168 վկայականը, առք ու վաճառքի պայմանագիրը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ռուբեն Արայի Թովմասյանի կողմից առք ու վաճառքի պայմանագրով ձեռք բերված՝ Ալավերդի քաղաքի Զորավար Անդրանիկի 193/15Ա հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, N 193-15/1 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. փետրվարի 20

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 45-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԱՌԱՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 05.02.2020թ. N 27-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 11022020-06-0047 վկայականը, հաշվի առնելով, որ Արմինե Ալբերտի Ստեփանյանն ընդունել է մառանը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, N 7-12/2 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 05.02.2020թ. N 27-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 52.64 քմ արտաքին մակերեսով (46.8 քմ ներքին մակերեսով) մառանը՝ 115808 (հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր ութ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.02711 հա մակերեսով հողամասը՝ 219591 (երկու հարյուր տասնինը հազար հինգ հարյուր իննսունմեկ) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Արմինե Ստեփանյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում մառանի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. փետրվարի 20
ք. Ալավերդի